ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1221-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14 պրիմ 3 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշմամբ, 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ և 33-րդ կետերով և հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Ծողակաթ բնակավայրի բնակիչ Վրեժ Կիրակոսյանի դիմումը՝ Ճամբարակ համայնքի Ծողակաթ բնակավայրի 9-րդ փողոց 23/1 հասցեում 05-074-0001-0005 կադաստրային ծածկագրով գտնվող 0.09856հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունը օրինականացնելու մասին.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Ճամբարակ համայնքի Ծողակաթ բնակավայրի բնակիչ Վրեժ Վիրաբի Կիրակոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի նշանակության 0.09856 հա հողատարածքի վրա ինքնակամ/2026ZJVP6/ կառուցված մեկ հարկանի 69.91 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 161.1 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել օրինական համայնքային սեփականություն՝ հետագայում իրեն օտարման կարգով տրամադրելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 17
ք. Ճամբարակ